

Uyruksup G.

Gurugtoymu

891. 99

U-63

831.99
U-63

ՀԻՐԳԵԼՆԻԿ ԱՅՈՒՆԷՅԻ



ԶԱՆԳԵԶՈՒՐ



ԺԵՐԵ

ՆԱԶԻՆ

1929

-6 NOV 2011

891 99 *uy*
U-63

ԳՈՒՐԳԵՆԻԿ ՍՅՈՒՆԵՑԻ

ԶԱՆԳԸ-ԶՈՒՐ

ԿԱՄ

Ա.ՍՏՎ.Ա.ԾՆԵՐԻ
Պ.Ա.ՏԵՐԱ.ԶՄԸ

Պատմական-աղանդություն — հին-հին դարերից



Հր. № 1020: Գրառեպլար № 2220 (բ): Տիրաժ 2.000:
Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում:
Պատվեր № 123:

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Իմ նպատակն է այս աշխատություն մեջ լիրի-
քական ձևով յերգել Զանգեզուրի աշխատավոր գյու-
ղացիների հնազույն անցյալի եպիգոդը: Աշխատու-
թյանս հիմքը կազմում են պատմական դեպքեր: Դեպ-
քերը աեղի յեն ունեցել 10-րդ դարու սկզբին իբրեւ
գյուղացիական շարժում՝ ընդդեմ հոգեվորականու-
թյան յեւ ազնվականության: Իզուր ե հայ իշխան-
ների պատմաբան Սյունյաց յերբեմնի առաջնորդ Ստե-
փանոս յեպիսկոպոս Որբելյանը փրփուրը բերնին
նրանց հայհոյում, անվանելով «անաստված, ժպիրհք,
յելուզակք» (այսինքն հանդուգն, բանդիտ) յեւ այլն:
Ամեն մի ազատագրական շարժում՝ շահագործող դա-
սակարգերի յեւ նրանց իդեոլոգների դեմ, վերջիններիս
կողմից միշտ վորակվել է բանդիտական, աշխարհի
ստեղծագործության որից մինչեւ այժմ: Բացի այդ,
Ստեփանոս Որբելյանն ինքը գրում է, վոր Տաթևվի
բնակիչները մեծամեծ վիշտ եյին հասուցանում Յու-
րեցոց (այսինքն բռնություն): Իսկ ո՞վքեր եյին այն
ժամանակվա Տաթևվի բնակիչները, սոսկական ու-
միկնե՞ր, հարկատու գեղջուկնե՞ր, իհարկե՞ վո՛չ: Տա-
թևվը յեղել է Սյունյաց հոգեվորականության աթո-
ռանիստ ավանը. պարզ է, վոր նրա բնակիչներն եյին

«սրբազան» կղերականներ, կողքին յեւ իշխանազուններ, ազնվականների ճետեր, վորոնք յեկեւ եյին աշխտեղ «ուսում» յեւ «գիտութիւն» ձեռք բերելու:

Դարե՛ր առաջ Զանգեզուրի գեղջուկները յեյան իրենց ջլոտ, բարձրացրած բազուկներով, նաքնբոված բռունցքները սեղմեցին յեւ այդ բռնապետութեան նակտին հարված զարկեցին:

ԶԱՆԳԸ-ԶՈՒՐ

(կամ ասվածների պատերազմը)

«Բաղում և մեծամեծ վիշտ հասուցանելին՝
«սուրբ ուխտին Տաթեւա բնակիչք Յուրա բերդի,
«վորք ելին անասոված. ժպիրհք և լեյուզակք:
«Յեւ հաւուր միւում յեկալ ի գիշերի յեղակարծ
«ժամու սկսան կողոպտել գեկեղեցին և զգործա-
«տներն և զհարկսն կրոնավորաց:

«Ապա զոմանս ծերոց զսրով հարին և զալլան
«փախստական արարին, զոր ինչ գտին ինք-
«չանքն առլալ գնացին:

«Տարան և արծաթե սափորով մեռուն և
«վաթեցին ընդ քարն:

Ստ. Որբեյան, Պատմութիւն նահանգին
Սիսական, էջ 247, գլ. ԽԸ:
Բ.

«Գալն Իսմայելացոց և կործանումն գեկեղե-
«ցին և ալբելն զվանս Տաթեւա:

«Նույն հեղինակութեան գլ. ԾԸ, էջ 312:
Գ.

«Հսկալական «Զանգ»-ի ալն ժողովրդական
«ավանդութեան, վորի անունով իբր թե Զագեճորը
(Սյունիք) կոչվում ե Զանգեզուր...

«Յոթնեորդ զողանջը»

ՏԱԹԵՎԻ ՎԱՆԲԸ

(Պատկեր)

Ինչպես վորսկանի շեշտակի գնդակից սարի
արջը գողալով, մահվան վերջին բուսկների ան-
զոր կատաղութեան փրփուրը բերնին, լեռնաշ-

խարհի վիթխարի ժայռերից պոկված քարի կտորի նման, գլորվում ե, գլորվում հանկարծ դիպչելով անդնդի լեզրին ցցված խիտ մացառների թփերին, կանգ առնում, բրդոտ թաթերն ու չան-
չերը դեպի լեռկինք ցցած, ուխտ ծռած՝ կատա-
ղի, բայց մեռած, սառած աչքերով ամպերը չա-
փում, վերջին շունչը փչում, այնպես ել անուշի
անդունդի լեզրին, ժեռ քարափին չոքած ե
Տաթեվի մռայլ վանքը, վորպես դարերի անեծք,
պապական արատ: Իշխում ե նա մռայլ անդուն-
դին, ուր տիրում եր հավիտենական խավարը և
«չարքերի հարսանիքը» գիշեր թե ցերեկ: Շուրջն
անտառներ, վիթխարի և կուսական, դիմացը
փայլուն արծաթե գոտու նման Արագը, ավելի
բարձր սարեր, սեգ սարեր՝ բազմազան բուր-
վետ գույնզգույն ծաղիկներով զարդարված...

Ամեն առավոտ, չերբ աքլորը կանչում ե զիլ
ձայնով գվարթ աշխատավորին դեպի հանդը,
չերբ ջահել հարս ու աղջիկ կուժներն ուսին
վազում են աղբյուրը, սառնորակ ջրերով
իրենց ալ կարմիր, շողշողուն, մարմանդ լեռեսը
զովացնելու և հնձվորի պաշարի ջրի կուլեն սառ-
նորակ, անապական և անպական պահել ու տեղը
հասցնելու, չերբ նանին կովն ե կլթում կամ գոր-
գի քնարը հյուսում, չերբ ազատ բատրակը գլու-
ղի մեջդանում ձեռքը կոնատակին դրած նախիրն

ե ժողովում հանդը քշելու, չերբ արևը, վորպես
մի հսկայական պղնձե շիկացած գունդ և հրեղեն
խրձիկ՝ Արագից հանդարտ և վեհորեն բարձրա-
նում ե, պաշտառացնում լեռկիրը և վոսկեզո-
ծում բնության հրաշալի տեսարանները, հա-
այդ ժամանակ վանքը և նրա գմբեթներն այդ
ընդհանուր գեղեցկության մեջ մնում են վորպես
անհարիր, մռայլ, իբրև ապացույց անցած բռնու-
թյան և շահագործության: Այժմ այնտեղ սարգն
ե իր վոստայնը հյուսել: Գիշերները չղջիկներն
են ֆռռում նրա շուրջը, ծիծեռնակն անգամ
խուսավում ե այդ անապատից...

Վանքն ամայի չե և անմարդաբնակ: Նրա
միակ միաբանը, Եջմիածնից ուղարկված շրջանի
«առաջնորդ» վարդապետը, իր վերջին որերն անց
ե կացնում «մթնաձորի» գլուղերում: Վանքը
մեն մենակ կծկվում ե, կռչ գալիս, ուզում ե
աննկատելի մնալ, ուզում ե իրեն մոռանան, քրեա-
կան այն հանցավորի սարսափած դեմքով, վորը
դիտե, թե այդ հազարերորդ դեպքն ե իր բազ-
միցս հանցանքների և ել իրեն չեն ների վոչ
մարդիկ, վոչ արդարադատութունը...

Ջանդերը խռոված գոմշի ապուշ արտա-
հայտությունն ունեն, ինչպես վարդապետի ջրա-
կալած աչքերը: Ահա քանի գարուն ե անցել և

իրենք դատապարտված են հավիտենական լուս-
թյան: Այդպես չե՞ր առաջ:

Դարեր շարունակ նրանք իշխել են ձորե-
րին, մռայլ անդունդներին, գյուղին և գյուղերին:
Յերբ մատաղի մսով կզակը հաստացրած ժամ-
կոչն ամեն առավոտ արագի թասով փորը մի
լավ տաքացնելուց հետո, պարզում եր կոճղի
նման կարճ ձեռքերը, քաշում զանգի թռկերը,
զանգն աղաղակում եր իր դեմ՝ ԶԱՆԳԸ—ԶՈՒՐ
Ե, ԶԱՆԳԸ—ԶՈՒՐ, ՈՒՐ...:

Բ. ԱՌԱՋԻՆ ՂՈՂԱՆՋԸ

Կար այնտեղ մի սպիտակաշեն մեհյան և
Սյունյաց հեթանոս իշխանի ապարանքը: Բռնակալ
եր այդ իշխանը և անողոր: Բազմաթիվ ելին նրա
հարձերի և ստրուկների թիվը փորպես յերկվոտ-
նանի գրաստներ: Լեռների զավակները քաշվել,
պատսպարվել ելին դաժան իշխանի չարագոր-
ծությունից՝ Բերդիկի, Սուսանի կուսական ան-
տառներում, մթնաձորերում և Արաքսի ալրերում,
կամ Խուստուփի ժայռերի ծերպերին: Կանաչ
գարունքին կամ ձմեռվա բուք ու բորանի որե-
րին, գազանների հետ կոխ բռնելով, անտառնե-
րում ծառերի վրա պար բռնելով գտնում ելին
իրենց սնունդը և հագնելու մորթիները՝ գազա-
նային կամքով ու ուժով: Լսել եր նրանց մասին

Սյունյաց հեթանոս իշխանը, իզուր եր համոզում
և սպառնում, վոր իջնեն դաշտերը կամ գոնե
սարերի լանջերը: Միայն ճերմակ քրմապետի ո-
ձային խորամանկութունն ու նենգամտութունը
կարողացավ սահեցնել նրանց ժայռերի ծերպե-
րից դեպի սարերի լանջերը, տափարակ դաշ-
տերը: Յեվ կատարվեց այսպես:

Մի որ յեկավ սպիտակագգեստ քրմապետն
ու յերգեց Սյունյաց լեռների գեղեցկութունը,
հպարտութունը և նախնյաց քաջագործութունը:
«Ահա Հայր Արամազդը, վորը բազմած Ե Մասի-
սի սպիտակափառ գազաթին և իշխում Ե ան-
«ծայր յերկրին, ծովերին, անապատներին, լա-
«զուր յերկնքին: Նա բարկությամբ շանթահար
«Ե անում «անհնազանդ ազգերին», «անիրավ»
«և «համառ» մարդկանց վոչնչացնում, նոցա
«մոխիրը քամուն տալիս և պաշտպանում «հայոց
«աշխարհը» յերկրի և յերկնի պատուհասներից:

«Ահա Գյուլցագն Վահագնը, վորը ծաղրեց
«վիշապների աստծուն և Բարշամից հարդ գո-
«ղացավ: Այդ հարդի ճամբան տանում Ե դեպի
«անմահության» և «յերանության» հովիտը, ուր
«մեռելները կենդանանում են և միայն դյուցա-
«զունները և հայոց աստվածների յերկրպագու-
«նները կանցնեն այդ ուղիով: Հուրհե՛ր Վահագնը
«քաջերի, արիասիրտների աստվածն Ե, իսկ ին-

«Հոգի պակաս են Մթնածորի ժայռերի և ան-
«տառների բնակիչները: Ահա սփռվելի Աստղի-
«կը — գեղեցկության, յերգի և յերաժշտության
«աստվածուհին. և միթե Սուսանի, Բարգուշատի
«յեղեղնուտի՝ և Խուստուկի սարերի խռոված
«բնակիչների կանաչք և աղջիկները չունեն լուս-
«նանման շող-յերես, ալ-կարմիր թշեր և վոսկե-
«զոծ, առատ, փարթամ, մինչև կրունկները
«հասնող զիսակներ, գանգուրանման խոպոպիկ-
«ներ...»

«Իսկ բարեգուլթ, բարեծնսնդ Մայր
«Անանիսը, աշխատանքի, հողի, բրտինքի և զղա-
«յուն մայրերի աստվածուհին: Նա որհնում է
«խաղաղ յերկրագործին, նա «տալիս է» նրան
«ցորենի, ձեթի, կորեկի, խաղողի առատ բեր-
«քեր, նա բաշխում է Հայոց աշխարհին կայտառ
«մանուկներ, և միթե Սյունյաց խռոված բնա-
«կիչները չունեն աշխատանքի համար՝ ջլոտ բա-
«զուկներ, լաշն թիկունք, ուժեղ մկանունքներ,
«ամուր ատամներ, բրոնզե կամք...»

«Յեվ միթե առատածին չեն Սուսանի
«և Մթնածորի լեռների մայրերը, վոր իրենց
«անապական կաթով սնուցանում են տարեկան
«մի-մի աղյուծի կորյուններ: Ահա Հայր Արա-
«մազդի արձանը փառահեղ, հսկա և խոշոր:
«Հոգարս և վիթխարի կանգնած է ներքև, ան-

«դունդի քարափին, անդունդի լեզրին, այնտեղ,
«ուր կա մի սպիտակաշեն մեհյան և Սյունյաց
«հեթանոս Մեծ իշխանի ապարանքը: Նրա կողքին
«Վահագնի արձանը, վորի բերանից ի տուն-
«ջյան և ի գիշերի ծուխ ու բոց է լեխում. հրե-
«ղեն միրուքով, գանգուր մագերով, աչքերից
«կաջծակ է ճալթում, հոգը ցայտում: Նրա կող-
«քին իր քնքույշ ամուսնու՝ յերանելի Աստղիկի
«մարմարե արձանը, վորի կանաչ մամուռի
«ստինքներից կաթ է հոսում և մեղր. իսկ ինքը՝
«հրաշալի պատկերով, աննման նազանքով, տավի-
«ղը ձեռքին: Վերջապես վոսկեծին Մայր Անա-
«հիսի վոսկեզոծ արձանը, ցորենի խուրճն ու ման-
«գաղը ձեռքին, հասկերով ու խաղողի վողկույզով
«պսակազարդ: Սպիտակաշեն են նոցա մեհյանները
«և զարդարված են Սյունյաց սառնորակ աղբյուր-
«ների պես-պես շատրվաններով գունդգուն
«ծաղիկներով: Իսկ յեղեմնիների, սոսենիների և
«կաղնիների ծառերով այն հրապարակը, ուր
«տեղի չե ունենում հայոց աստվածների տոնը:
«Տոներին «վարձատրում» են և մրցանակ տա-
«լիս քաջերին, գեղեցիկներին, յերգիչներին,
«նկարիչներին, յերաժիշտներին, աշխատավոր-
«ներին և առատածին կանանց...»

«Կակղում, փափկում է իշխանի քարացած
«սիրտը և նա դառնում է «հյուս վոշխարը», ժո-

«ողվրդի հայրը: «Այսպէս եւ աստվածների հօգու
«կամբը» .. Այսպէս չերգեց սպիտակագգեստ
քրմապետը ու փռվելով գետնին, սկսեց մազերը
փետել, կուրծքը ծեծել, հողն ու մոխիրը գլխին
տալ: Աղշեցին, քար կտրեցին հուժկու լեռնա-
կանները և քրմապետի պատմութիւնից հիա-
ցած կանայք: Ահա մոտեցավ նրան վիթխարի մի
աժգահա ու ճկուն թով բարձրացնելով քրմապե-
տին՝ հարցրեց.

— Ինչո՞ւ յետ լալիս, ծերուկ, — և քրմապե-
տը պատուոտելով ձուռնի նման ճերմակ քղանցքը,
ձեռքերը պարզեց վեր՝ դեպի յերկինքը ու վող-
բաց. «Անտէ՛ր եմեր յերկիրը և կորուսյալ մեր ազ-
գը. վասն զի արեւելքից յեկած վիշապագունք ու-
«գում են կործանել մեր մեհյանները և սրբա-
«զան կուռքերը, կոստրել աստվածների ծա-
«ռաներին, ավերել մեր շէն յերկիրը և հաս-
«տատել Բահադի հեթանոս կրօնը: Կորած ե
«Մյունչյաց յերկիրը, յերբ վոր քաջերը թաղնվում
«են լեռների ծերպերին, խոր ալբերում, խիտ
«անտառներում և «ազգն» ու «հայրենիքը», «սըր-
«բազան կրօնը» թողնում անտեր»: Վողբ ու կոծ
բարձրացրին կանայք և ափսոսացին աստված-
ներին: Մռնչացին քաջերը և վիթխարի ծառեր
արմատախիլ անելով, ուսներին դրած՝ հոսեցին
լեռներից գոռում-գոչուհով իբրև մի ահուկ հե-

ղեղ, աշնտեղ՝ անդունդի յեզրին, ուր թառած
են աստվածները և ուր բանակ էր դարձած թըշ-
նամին: Գլորվեցին վիթխարի ժայռի կտորները
ու նրանց հետ հավասար քաջերը. ահից սարսա-
փած թշնամին յերերաց, կուշ յեկավ ու ձգվեց
փախուստի ճամբեն: Հասանքաջերը, աժգահա լեռ-
նականների յերկարահասակ կանայք, ուժեղ, ա-
ռուչգ, կլորիկ պատանյակներ և փոշնչացրեցին,
սրբեցին թշնամուն և հոսեց շատ արյուն... Այլա
բացվեցին դղյակի պղնձե դռները և դուրս յե-
կավ իշխանը, նստած սպիտակ նժուլդին, վոս-
կեթել պատմութեան հագին, վոսկեգոծ սաղա-
վարտը գլխին, մարգարտաշար գոտին կապած,
զրահավորված թիկնապահներով, ուղեկցութեամբ
քրմապետի: Դուրս յեկավ իշխանը, վողճուհեց
քաջերին, պատկառեց նոցա տեսքից, ուժից,
բալց ահն ու յերկյուղը սրտին: Յեկան պսակա-
զարդ սպիտակագգեստ քրմուհիները. սրնգով,
տավիղով, ցնծղաններով զիմաւորեցին նոցա: Հաղ-
թական չբերթը մտավ դղյակը — քաղաքը, վորի
բնակիչները պատկառեցին ահով և հիացմունքով:
Սպիտակագգեստ քրմապետն առաջնորդեց նոցա
մեհյանները՝ աստվածների մոտ: Հոսում ելին ա-
ռատորեն գինին, կաթը և զոհերի արյունը, ցըն-
ծում ելին աստվածները և լեռնականները, վոր
այս ամենի արսափն փալլից հիացել, շլացել
ելին...

Այսպես առեց որեր, շաբաթներ: Ի՞նչ ասանք ծրագրեց... Յեվ մի որ նորից չերեաց սպիտակագգեստ քրմապետը, հայտնելով վոսկեծին-վոսկեմոր Անահիտ աստվածուհու կամքը.— «Հուժկո՛ւ «յեն բաղուկները լեռնականների, ուժեղ և ջրոտ. «թող նորա հերկեն չերկրի խոպան դաշտերը, «տնկեն խաղողի վողկուլճներ, սերմեն ցորենի «հատիկները, վասն զի որհնյալ է նոցա աշխատանքը». և յեղավ այդպես: Յեղուգներով, մատներն արնոտելով լեռնական կանայք և սղամարդիք արմատախիլ արին փուշ ու մացառ, անդունդը գլորեցին քարեր ու ցանեցին պողատու սերմեր և ցողեցին իրենց քրտինքով: Արտերի շուրջը շինեցին խրճիթներ ապրելու համար:

— Յեկավ իշխանն իր չքախմբով, տեսավ նոցա աշխատանքը, հիացավ, խրախուսեց և նվիրեց լեռնականների առաջնորդներից վոմանց պղնձե դրամներ, կանանց զարդեր: Յերբ խաղողի, ցորենի բերքը հասավ, յեկավ ճերմակագգեստ քրմապետն ու որհնեց, գովեց նոցա աշխատանքը և պահանջեց առատ նվերներ աստվածներին և լեռնականների «հայր» իշխանաց իշխանին: Վերագարձավ քուրմը գոհ և չերժանիկ: Հպարտ եր ու վես իշխանը բռնակալ: Արևը պտուղտ տվեց մի քանի հարյուր անգամ չերկրի շուրջը, յեկավ նորից ճերմակագգեստ քուրմը և «հայտնեց» գեղեց-

կության աստվածուհի Աստղիկի պատգամը: Մայրերը լալով բաժանվեցին սիրասուն դուստրեներից, վորոնց սնուցել ելին չերկար գիշերներին իրենց կրծքին և տապ որերին պահել մեջքին... Գնացին գեղեցիկ աղջիկներն իշխանի և ճերմակագգեստ քրմապետի ու քուրմերի հարճերը դառնալու...

Լսե՛ց այդ ու ճեփաց լեռնական աշխարհը:

Յերկիրը քարքարոտ եր, բերքը սակավ: Յերաշտն ու մորեխն արշավեցին ու ավերեցին չերկրագործների բերքը և Արամագղը «չընդունեց» գոհերը, շանթեր չարձակեց ու զլացավ՝ կրակով, ծխով՝ վոհնչացնելու հայոց աշխարհի թշնամիներին»: Արամագղը լուռ՝ եր, իսկ Անահիտը... չեր «բարեխոսում»: — Սուրն ու մահը առատ հունձ ելին անում: Կերան լեռնականներն իրենց վերջին պաշարը, անասունները, մորթեցին նույնիսկ կատուններն ու շները: Հուսահատությամբ մագերն ելին փետում, կուրծքները ծեծում լեռնական կանայք ու հիշում մութ անտառները, ժույղերի ծերպերը, խոր այրերը և վորսի առատ համեղ միսը՝ անհուն կարոտով...

Յեկան իշխանի և քրմապետի մարդիկ ու պահանջեցին աստվածների հարկերը ճնշված ու կմախքացած անճանաչելի լեռնականներից: Յերբ վոշինչ չգտան, մորակների, գավազանների ու

խարազանների հարվածով ժողովեցին զեղեցիկ
պատանիներ և աղջիկներ և տարան արևելքի
վաճառականներին ծախելու: Հառաչեց, զղրդաց
լեռնական աշխարհը. նղովք և անեծք եր լեռնում
նոցա բերանից աղոթքի փոխարեն: Կար արևելքի
վաճառականների մեջ և մեկը Յերուսաղեմից,
վորը գնեց բազմաթիվ պատանյակներ ու գի-
շերով ծածուկ տարավ ծնողներին վերադարձրեց:
Արտասվեցին գորովագուլթ մայրերը կորած գա-
վակներին գտնելու համար, ցնծացին անճար հայ-
րերը և ուհնեցին ալեհեր նահապետներն անձա-
նոթ բարերարին: Իսկ նա ժողովեց իր շուրջը
լեռնականներին ու նոր խոսքեր ասաց: «Միակ
«աստծո, վոր ամենակարող ե և բոլորի համար:
Քրիստոսի, վոր կույրերին առողջացնում եր, մե-
ռածներին հարուխյուն տալիս, անկարներին և
տկարներին ոգնում և խաչվեց բոլորի փրկու-
թյան համար. հարուխյուն առավ, լերկնքումն ե
գտնվում, իր հոր, Աստծո կողքին: «Կույսի զա-
վակը» այնտեղից հսկում, հովանավորում ե իր
հոտին: Յերուսաղեմցի վաճառականը քարոզում
եր «ավելորդ շապիկը տալ ուրիշին»: Նա խո-
սում եր լերկնքի արքայության մասին, վորը աշխա-
տավորների տեղն ե և զժողով գեհենի մասին, վորը
իշխանների, քրմապետների և ունևորների տան-
ջանքի վայրն ե: Ու լսեցին հավիշտակությամբ

լեռնական կանայք և ջերմ կարոտով արտասվե-
ցին անձանոթ խաչված աստծո համար ու ցան-
կացան տեսնել նրան: Հիացան և ալրերը լաֆա-
թիկունք: .

Ահա նորից լեռնական իշխանի մարդիկ ու պա-
հանջեցին պատանիներ և աղջիկներ: Բորբոքվե-
ցին լեռնականները, բարձրացավ լեռան քարի
վրա յերուսաղեմցի վաճառականը ու կոչ արեց
չտալ իրենց գավակներին, նկարագրելով նոցա
տանջանքն ու տառապանքը Արաբիայի և Յե-
գիպտոսի անապատներում: Հարձակվեցին բրե-
րով, փախտելով իշխանի ձիավորների վրա, ջար-
գեցին նոցա գլուխները ու արչունվա հետ զըր-
կեցին բռնակալության զղչակը: Լսեց իշխանը, կա-
տաղեց ու ճերմակագգեստ քրմապետի հետ՝ հա-
վաքելով զորք, արշավեցին լեռնականների վրա,
պահանջելով գերիներին և յերուսաղեմցի վաճա-
ռականին: Նորից լեռների ժալոերն ու անտա-
ռի արմատախիլ ծառերն իրենց գործը տեսան:
Գերի ընկան իշխանն ու սպիտակագգեստ քրմա-
պետը՝ քրմերով, բազմաթիվ զորականք: Դղյակի
քարափից գլորեցին քրմերին, քրմապետին և կո-
տորեցին աստղադարձ քրմուհիներին: Յերբ հեր-
թը հասավ իշխանին, գաղազած լեռնականները

կամեցան կտոր-կտոր անել նրան: Յեկավ լե-
րուսաղեմցի վաճառականը, վորին «Առաքյալ»
եյին կոչում ու սև քջանցքի տակ առնելով իշ-
խանին, ազդարարեց. — «Սա պսակ է կրում իր
գլխին, վոր Աստծո ընտրյալն է. ձեռք մի բարձ-
րացնեք սրա վրա: Քրիստոսի հավատը սրան
կդարձնի հեղ, վորպես գառն և կսրբի սրա մեղ-
քերը, վորպես անմեղ աղավաղ»: Ապա կոչ ա-
րեց լեռնականներին՝ իսպառ վոչնչացնելու մեհյան-
ներն ու կուռքերը, և խորտակվեցին Վահագնի,
Անահիտի, Աստղիկի և Արամազդի արձանները:
Այրեցին, վոչնչացրին, կործանեցին, ավերեցին և
թալանեցին աստվածների տաճարները, նոցա
գանձերը, անխնա կտորելով մեհյանի սպասա-
վորներին: Իշխանի դղյակին ձեռք չտվին: Վասն
զի, նրա դռանը՝ քրմերի արյունից յերուսաղեմցի
վաճառականը խաչաձև նշան եր արել: Յեվ խոր-
տակված աստվածների արձանների պատվանդա-
նից յերուսաղեմցի վաճառականը, վորին Առա-
քյալ եյին կոչում, ձուլեց մի զանգ ու կախեց
դարափոր կաղնու ձուղղից: Յերբ յեղավ նրա ա-
ռաջին զոդանջը, ամպը պատեց Արաքսին, խոռ-
վեց Արևելքը ու հնչվեց ջերմ արևելքից վողբա-
ձայն մեծադի նզովքը — «գաւգըր — գո՛ւր»... Այս-
պես նա որերով քարոզում եր ամբոխին նոր
աստծո մասին:

Յերբ հնչում եր Ձանգը — զուրը, հավաքվում ելին
հավատացյալները: Վերջին 40-ըդ որը, յերբ լույ-
սը բարին տվեց, Առաքյալն սպիտակ խաչանիշ
դռոջը ձեռքին, իր կողքին ունենալով իշխանին,
իշխանուհուն ու նրանց զավակներին, վորոնց հե-
տևում եր զորքի, ժողովրդի, լեռնականների մի
հսկա բազմութուն, Տաթևվի գառիվերից (վորտեղ
դղյակն եր կառուցված հին դարերում) իջնում
եյին գեպի Վորոտան գետը: Ամենքը ձեռքներին
ունեյին փայտե խաչեր կամ նույնանման նշան
կրճքներին: Գնում եյին քարքարոտ, ավազոտ
ճանապարհով վոտաբոբիկ ու իջնում գեպի ներ-
քև, խոր ձորը, ուր հոսում եր գետը: Փուշն ու
տատասկը ծակում եր նոցա վոտները, արյունը
հոսում եր և վերքերը մրմռում, իսկ Առաքյալը
քարոզում եր. — «համբերություն, համբերու-
թյուն»: Յերբ հասան Վորոտան գետին, նախ
իշխանը՝ ապա ամենքը՝ մերկանալով թափվեցին
գետը: Այդտեղ Առաքյալը մկրտեց նրանց: Հետո
յեկոնդղյակը և զոհեր մատուցեցին նոր աստծուն:
Յեվ հենց զորքի, լեռնականների ու ժողովրդի
առաջ Առաքյալն ոճելով կրկին անգամ իշխանին,
թագով պսակեց և ազդարարեց առաջին քրիս-
տոնյա սերունդներին խաչապաշտ թագավորի և
տիրոջ պատվերը, վոր «թագավորի կամքը արդար
է և վճռական», և այսպես վերջացրեց. «Այժմ,

յեղբայրք, աստծունը կտաք աստծուն իսկ կայսերն զկայսեր»։ Յնցվեցին լեռնական նահապետները. լուռ եր, մոռյլ և ապուշ կտրած «ռամիկ» ժողովուրդը. միայն զորականները, իշխանագուհիները, պալատները, ազատականները ցնծացին ու նոցա նետերի տարափից, հաղթական աղաղակներից արեգակի լույսը խավարեց, լեռները խլացան։ Ահա այդ խավար լույսի մեջ Առաքյալը համբուրեց առաջին քրիստոնյա թագավորի ճակատը, իսկ նա չե՛լ՝ յերուսաղեմցու աջը։ Սյունյաց լեռներում զանգերի առաջին դողանջը ամրացրեց ստրկության յերկուտակ շղթաները և հիմք դրեց դարերի անեծքին, պապական արատին՝ կրկին անգամ...

ՅԵՐԿՐՈՐԴ ԴՈՂՍԱՆՋԸ

Հազար-հազար անգամ արևը բարձրացավ Արաքսից ու գնաց հանգչելու Սուսուռուփ սարի կատարին։ Շատ բաներ փոխվեցին. մեհյանների տեղ յեկեղեցիներն ու վանքերը, անապատներն ու «կուսանոցները» իրար հետևից սուռնկի նման բուսեցին և ժեռ քարափին հին աստվածների զոհարանների սեղանին բանդված բեկորների վրա բարձրացավ Գրէգոր Տաթևացու հոյակապ վանքը, բայց յերկիրը մնաց նույնը և կուսական։ Վանքը շինվեց ու բարձրացավ լեռնական-

ների, շինականների մեջքով կրած բարերով, արյունի և քրտնքի խառնված շաղախով։ Վանքը պարսպապատ եր, դմբեթները սրածայր, խաչանիշ, իսկ նրա բակում գտնվում եր մի «հրաշագործ» աշտարակ, վոր կառուցել եր խառգանազգեստ Վանանայրը՝ սյառն Հովհաննես «սուրբ»...

«Հրաշագործ» աշտարակը մատի թեթև հպումից որորվում եր, շարժվում։ Ասում են՝ այդ աշտարակը կառուցված ե այն յերուսաղեմցի վաճառականի՝ Առաքյալի գերեզմանին, վորն առաջին անգամ տարածեց Քրիստոսի «լույս ճրձմարիտ» հավատը։ Սյունյաց մութ-մութ ձորերում և հալածեց չարքերին, դևերին յերկրի սահմաններից։ Այսպես են ասում միաբանները և առատ նվերներ՝ ձեթ, խունկ, կնարուկ, սպիտակ փամփրիկ գառնուկներ և խաղողի զինի ընդունում հավատացյալներից և աղոթում սուրբին, վոր միջնորդի նոցա հոգու «փրկության» համար։ Այսպես եր հավատացած և խարազանազգեստ Վանահայրը, վոր սերված եր Առաքյալի սերունդից և իր որերն անց եր կացնում արտաքուստ ճգնությամբ ու դաստիարակելով, ուսուցանելով աշակերտներ, վորոնք պետք ե լինելին ապագա հովիվները՝ հավատացյալների հոտին։ Վանքը հովանավորում եր առաջին քրիստոնյա թագավորի

շառափիղներինց Մմբատ իշխանը, Բաղաց մեծ տանից: Յեվ հարուստ եր վաճառ իր բազմաթիվ ձիերի, ջորիների յերամակներով, վոչխարի հոտերով, գլինու, ձեթի, ցորենի շտեմարաններով, սեփական գյուղերով ու ջրաղացներով, Յեվ բարեպաշտ հավատացյալները՝ ռամիկները տալիս ելին տուրք և՛ Վանքին, և՛ իշխանին ու հեծեծում խուլ կերպով...

Ճարպիկ եր, յեռանդուն ու իր գործին աշխույժ այդ բարիքների կառավարիչ և վանքի միաբանության տնտես՝ Գյուտ իմաստասեր աբեղան: Հաճախ եր նա նստում սպիտակ ջորին ու շրջում գավառներն ու գյուղերը «պտուղ» ժողովելու, վաճառ գիրված ե. «Աստծունը՝ աստրծուն, կայսրինը՝ կայսեր»:

Վեչ-վոք պատարագի արարողությունը չեր կատարում նման ջերմեռանդությամբ և լրիվ: Արտասվածոր աչքերով նա բարձրացնում եր սկիհը և ավանդում «խաղաղությունն ամենեցուն» կամ «առեք, կերեք, սա յե մարմին իմ»: Գյուղերում այցելում եր տկարներին, նամանավանդ ալրիններին, վոմանց գաղտազողի հրավիրում եր խուցը և մխիթարում, շոյում, աղոթում նոցա համար... Խոնարհ եր նա և հեզ՝ խարաղանազգեստ Վանահոր առաջ, յերբ հարկ եր հաշիվ տալու իր գործերի մասին: Դողգոջուն ձեռքերով նա յերկուդածու-

թյամբ բացում եր Վանահոր խուցի դուռը և չոքեչոք մոտենում, համբուրում վերջինիս քղանցքը ու յերեսը փոշեթաթախ գետնին՝ սպասում, մինչև վոր Վանահայրը քրիստոնեական յեղբայրասիրությամբ հարաման տա շտկվելու, և աբեղան չոքած զեկուցում եր իր գործերի մասին և թեթեացած շունչ քաշում, յերբ Վանահայրը նրան արձակում եր: Նրան չեյին սիրում միայն յերիտասարդ միաբանները, վանքի աշակերտները, և շատերը տհաճությամբ խուսափում եյին խուլ ատելության կսկիծը կրծքներին: Յերբ նա յերեվում եր տաճարի մոտ, նոքա ուրվականների նման հետ-հետ եյին գնում, քաշվում ու անհետանում: Բայց հեզ եյին ու խոնարհ և լուռ եյին ժաշոխ նման: Աբեղան նկատում եր այդ, յերբեմն կատարի վավաշոտ դեմքը խոժոռում, ատամները կրճատեցնում ու անեծք մըմռալով դիմում եր իր խուցը:

Հաճախ եր պատահում կես դիշերին, յերբ խարաղանազգեստ Վանահայրը դեռ չոքած իր խուցի սառը հատակին, բազկատարած աղոթում եր, շարական յերգում, յերբ վանքի հոտաղներն ու հովիվները վոչխարների փարախում անուշ խումփում եյին, հսկումը թողած լեռնային գամփըռներին, պլպլում եր աբեղայի խուցի ձիթե ճրա-

զը և նա զգուշ քաջերով, վոտների մատների վրա հենված անցնում եր վանականների խուցերի, գոմերի դռների առջևից, հասնում մառանին, զգուշ նայում չորս դին ու բացում դռները: Բացում եր դռները, իջնում քարե սանդուղքի աստիճաններին, մոտենում կոշտ մազից գործած տոպրակների շարքին, քակում բերանը, բաց անում և հանում կիսամեռ մի անմազ, մարված աչքերով գեղջուկ պատանու ու ... ըմպում առատ գինի ու զոհաբերում իր անասնական կրքերին հերթական զոհը...

Կես գիշերին, խավար գիշերին, լերբ ահռելի անդունդի միջից ձորակի գետակն ե հոսում, Տաթևի վանքից սև սատանայի արձանի նման բարձրանում ե հարբած արեղալի հասակը Դաժան ե նրա դեմքը: Փայլատակում են նրա գազանալին գալի աչքերը և հանցավոր ձեռքերով բարձրացնելով մազի տոպրակի մեջ իր խեղդած զոհի դիակը, նետում ե քարափից՝ դիվային քրքիջով: Յեվ գնաց սևազգեստ Գյուտ արեղան հավատացյալների մեջ տարածելու, վոր չարքերը մերկ կանանց պատկերով մոլորեցնում են պատանի հավատացյալներին ու նոցա հողին վաճառում Բեհզեբեուղին Պետք ե ջերմ աղոթել, վանքին առատ նվերներ փալ, կրճքին աղոթագրեր կախել, վոր հալածվեն չարքերը Հայոց աշխարհից:

Ու գալիս ելին ուխտավորները շարան-շարան, առատ նվերներով:

Վարդավառի տոնին վանքի բալն ու շրջակայքը լցվել ելին հազարավոր ուխտավորներով, վորոնք տեղավորվել ելին՝ վոմանք վրաններում, վոմանք թփերի տակ, վանքի շրջակայքում: Յերբ վառվեցին վրաններում և ծառերի տակ կառուցված տաղավարներում ձիթե ճրագները ու խարուկները՝ ահա մոտեցավ վանքի տնտես Գյուտ արեղալի քարավանը գավառից բեռնավորված «լուսի» և «պողի» հարկերով: Քարավանը ներս մտավ դարպասով ու անցավ: Միայն արեղալի սրատես աչքերը նկատեցին դարպասի մոտ կուշյեկած մի կնոջ՝ մանուկը գրկին: Նրա մերկութունը պատսպարում ելին ցնցոտիները. քարավանը բավականին առճ ճանցավ... Իջավ սալիտակ ջորիից Գյուտ արեղան, վորպես տիրոջ աշակերտը՝ մխիթարելու թշվառին, վորը ցրտից դողում եր, արցունքի կաթիլներ կուլ տալիս. դողում եր և խարտյաշ մանուկն ու հեկեկալով լաց լինում... Գյուտ արեղան առաջնորդեց նրան Աստծո տաճարը, ապա իր մոռյլ խուցը...

Գիշերը խավար եր, մռայլ: Անդունդն ահռելի: Յեվ բուրթ կացինը կտոր-կտոր արավ լլկված ալբի կնոջը: Մանուկը կարծես զգաց հարազատ մոր կորուստը, սոսկալի վոճիլը և անմեղ թա-

թիկներն ու տոտիկները շարժելով սկսեց աղի-
ողորմ բղավել, արտասովել, կանչեց լկված, մորթ-
ված, կտոր-կտոր յիղած մորը, իսկ նա չգըր-
կեց ու չգուրգուրեց նրան և չկերակրեց մայրա-
կան կրծքի անուշ, անապական կաթով...

Խարազանազգեստ վանահայրը հսկումը վեր-
ջացնելուց դուրս չեկավ տաճարից և հասնելով ա-
բեղայի խուցին, լսեց մանկական աղիողորմ ճի-
չը, կանգ առավ և դավազանով զարկեց աբեղա-
յի խուցի դռան, կանչելով նրան...

Շփոթվեց աբեղան, ապա միամիտ դեմքով
վերցրեց մանուկին իր գիրկը, բաց արավ դուռը
և հեկեկալով հայտնեց, վոր «ընկեցիկ յերեխա
յե և վերադարձին ե գտել մեծ դարպասի շեմքին»:
Վշտացավ վանահայրը և նզովեց մանկան անգութ
ծնողներին, որհնեց Գյուլտաբեղային և մանկանն
իր գիրկն առնելով, աբեղայի ուղեկցությամբ
գնաց պարսպին կից՝ հովիվների փարախը:

Անգավակ եյին հովվապետն ու իր կինը, և
մխիթարվում եյին միայն նորածին գառնուկների
խնամքով: Գիտե՞ր այդ և սուրբ վանահայրը, և
վորքան յերջանիկ զգացին իրենց հովվապետն ու
իր կինը, յերբ նոքա ցնծությամբ մանկիկին ի-
րենց գիրկն առան, շերմաքին տաք համբուլչանե-

րով և ուրախության արցունքներով շերմացրի
մանուկի թխիկ, փամփրիկ այտերը, իսկ սա ի-
րեն զգաց «արևի գրկում»: Որհնեց նոցա առա-
քինությունը խարազանազգեստ վանահայրը և խոս-
տացավ մանկանն ու նրա ծնողներին իր հովա-
նալորության տակն առնել:

Այնտեղ, ուր սեգ-սեգ սարերն են կանգուն
և մարմանդ հովերն են շոյում թավշանման կա-
նաչ մարգագետինները. համբուրում Զառ զու-
մաշի նման փոված գույնդգույն ծաղիկների թեր-
թիկները, այնտեղ ելին արածում Տաթևի ուխ-
տին պատկանյալ վոչխարների հոտերը: Բազմա-
թիվ եյին հովիվները և արի: Ապա կատաղի,
զգաստ ելին նոցա հավատարիմ ընկեր գամփռո-
ները՝ սև, սպիտակ, մոխրագույն գալանման:
Հսկում եր այդ բոլորին վանքի բարիքներին
հովվապետը՝ իր հաստապուլիս դազանալն ուսին,
արծվի սրատես աչքերով:

Յերբ հովվապետի և հովիվների կանաք կավե
կճուճները, մորթե տիկերը շալակներին գնում
եյին «կիթ»-ի և սարից արխաջն եր իջնում
գունդ առ գունդ վոչխարի սուրուն, ինչպես եր
հնչում գառնուկների ուրախ մայունը, կայտառ
և անհոգ: Այն վճր մանկիկն եր, վոր ինքն ել
գառնուկների պես մայում եր, տրանդի տալիս,
կանգնում, թավալվոր ընկնում, ծափ զարկում և

չորեքթաթ տալով վազում, հասնում, գառնուկներ
րի հետ խաղում: Կամ թաթերը մեկնում դեպի
կովկիթը, հրճվանքի ճիչ արձակում առողջ կրծ-
քից: Ինչպես ելին բացվում հովվապետի լեռնա-
կան կնոջ կամար ունքերը և յերանությամբ ժրպ-
տում նրա վորդեկարոտ մախմուրանման շրթունք-
ները, վարդանման սարերի...

Մեծանում, ուժ եր առնում գառնուկների
մման մանկիկ Արամեղը որեցոր:

Զմեռ պապին մի քանի անգամ հյուր յեկավ
Սյունյաց սարերին ու իր խոտասիրտ բնավո-
րությամբ տհաճություն պատճառելով ամենքին,
հեռացավ գնաց, տեղի տալով ջան գարունքի
շարքերին: Մանկիկը, վոր հուրհեր եր և կան-
չում ելին Արամեղ, մեծացավ, փարթամացավ:
Նա գառնուկներ եր արածացնում. արագավազ
եր վորպես յեղնիկ, անվախ, համարձակ, ճարպիկ՝
Սուսանի վազերի նման: Մագլցում եր բարձր
ժայռերը, միհավի բները — պարում եր չինարի-
ների կատարներին և կենդանի-կենդանի բռնե-
լով նապաստակներին, աղվեսներին, յեղնիկներին
հետեւի վոտքերից, կամ ջալամների թևերից, քաշ
եր տալիս ու բերում հոր վրանը, իսկ աչտեղ կար
ծիծաղ ու ծափ և հիացմունքի կանչեր...

Զարմանալի մանուկ եր սա. ապշում եր փողջ
լեռնական աշխարհը: Լսեց խարազանագգեստ Վա-
նահայրն այս գարմանալի մանկան մասին, հիշեց
նրան և պատվիրեց, վոր բերեն իր մոտ վանքը:
Վանահոր կամքը կատարվեց: Յեվ ծնողները
սպիտակ մատաղացու գառնուկը տալով Արա-
մեղի գիրկը, իջան ներքև, Տաթևի վանքը:

Ճաշակեցին վանքի միաբանները նրա ծնողնե-
րի բերած մատաղի համեղ միսը և աղոթք արին
նրանց համար:

Արամեղը մնաց վանքում. նա պետք ե Գյուլտ
աբեղայի մոտ «գիտություն» ձեռք բերեր, ուսա-
ներ և յերգել սովորեր շարականները, սաղմոս-
ները ու նվիրվեր տիրոջ գործին, վասնզի այդ-
պես վորոշեց Վանահայրը: Վանական դաժան
պայմաններն անհանդուրժելի ելին լեռներում
ազատ մեծացած մանկան համար, քանի՜ անգամ
նա փորձեց փախչել, բայց այդ նրան չհաջողվեց,
ուստի կամա-ակամա ստիպված յեղավ հա-
ճախելու Գյուլտ «իմաստասերի» գպրանոցը, վորը
գտնվում եր վանքի գավթում:

ՅԵՐԵՐՈՐԴ ՂՈՂՍՆՁԸ

Մեղմ եր վարվում իր աշակերտ Արամեղի հետ
Գյուլտ աբեղան: Նա հոգով սքանչացած եր հրա-
շալի մանուկի գեղեցկությունից, ընդունակու-

թյունից և գաղտագողի կանչելով իր մոտ, կրկը-
նել եր տալիս տիրոջ տասը պատվիրաններից
հատվածներ «մի սպանաներ, մի գողանար, մի
շնար», բայց մի որ ինքը շնացավ և մանուկը
գնաց գանգատվելու Վանահորը, վորը կանչեց
աբեղային, նզովեց և կարգադրեց նրան նետելու
խորը նկուղը, վորտեղ կային կարիճ, գանազան
թունավոր զեռուներ և սողուններ...

Գյուտ աբեղայի դեմ տրտունջները ծայր
առան, շատացան: Հրճվեցին վիրավոր սրտերը և
բացվեցին համր լեզուները միաբանների, աշա-
կերանների, այրիների և ռամիկների, վորոնց
սիրտը դառնացած եր Գյուտ աբեղայի արարք-
ներին:

Նվում եր խոնավ նկուղում Գյուտ աբեղան
և ժամկոչի բերանով ապսպրում Վանահորը, վոր
հանի իրեն նկուղից, ինքն արդար ե, անբիծ,
վորպես «լույս անձառը», այլապես կթափվի շու-
տով տիրոջ ցասումը:

Յեվ «թափվեց» տիրոջ «ցասումը». վանքի
«պտուղների» առաքումը դանդաղեց. ել հվ կա-
րող եր այդ ամենը այնպես առատությամբ ժո-
ղովել, ինչպես զգաստ Գյուտ աբեղան և Վանա-

հայրը գիշերը հանգիստ քուն չունենր, տեսնում եր
անտանելի լեռազներ և զգում, վոր ինքը ծեր ե,
հոգնած և ժամանակն ե «սրբանալու»...

Ուստի լսելով միաբանների վոմանց հորդոր-
ներին և աղերսներին, զղջալով իր արարմունքից,
կանչեց, բերել տվեց իր մոտ Գյուտ աբեղային,
թողություն խնդրեց մեղաց համար և որհնելով
նրան, ծեր բերանով համբուրելով նրա ճակատը
հանցավորի շրթունքներով, հանձնեց Գյուտ ա-
բեղային Տաթևի ուխտի առաջնորդության գա-
վազանը անթիվ բարեմաղթություններով և ան-
զոր հոգով: Ապա կանչելով լպիրշ պատանուն,
անիծեց գեհենի սոսկալի տանջանքների խոսքե-
րով և կարգադրեց դահիճներին, վոր կտրեն նրա
աջ վոտի ծնկան տակի ճիլը, վոր նա չքայլի
արագավազ և այդ նույնն ունենա մինչև մահ-
վան վերջին ժամը, վորպեսզի տեսնի, հիշի, զգա
և ել չզրպարտի «սուրբ» պարկեշտ մարդկանց,
իսկ ինքը շոշափելով, խաբխափելով գնաց լեռան
այրը ճգնելու, հանցանքները քավելու:

«Բառաչեց, հառաչեց, ցավից մղկտաց մա-
նուկը ու վերքը լիզելով, փորի վրա փորսոդ տա-
լով իջավ վանքի շավիղից դեպի ձորը: Արևը
տապ եր, այրող, ծարավը սոսկալի, պահանջկոտ:
Դեռ առվին չհասած նա նվաղեց ու ընկավ...

Նրա մոտով անցավ մի ճամբորդ ծեր դար-
բին, Յուրա բերդից: Տեսավ նա փոշաթաթախ,
արնաքամ, նվաղած պատանուն, խոնարհվեց, գլը
կեց նրան, լվաց վերքերը, սպեղանի դեք վրան
և ուսին առնելով տարավ իր հյուղը անտառի
ծերին, ճամբի չեզրին, ժեռ մամուռած քարի
վրա, վորը գործած եր ուռենու ճյուղերից
դարավոր կաղնու հովանու տակ: Իսկ ժայռի
աջրում նրա դարբնոցն եր: Ռամիկ եր նա. Յուրա
հինավուրց, կիսավեր բերդի բնակիչներից, վորոնք
հալածական եյին, չքավոր և ձրի աշխատում եյին
Տաթևի ուխտի ու Սմբատ իշխանի համար:

Կազդուրվեց մանուկը. գոհ եր, վոր ունի
ապաստան և զթառատ, խնամող մի նոր հայր ու
սիրեց վարպետի դարբնոցը: Ուրախ եր վար-
պետը, վոր ունի ոգնական և ժառանգ:

Աշխատասեր և ընդունակ եր Արամեղը:
Հրճվում եր դարբինը ծեր՝ չերբ շինում եր շի-
կացած չերկաթից բահեր, քլունգներ և արորի
խոփեր, խաղաղ չերկրագործների, ռամիկների
համար և նրա գործը միշտ անպակաս եր և
արդար: Մռայլվում եր նրա խորշումած ճակատը,
աչքերից կատաղության շանթեր չեղնում, ինչպես

կռանի հարվածներից գնդանի շուրջը սփռվող
շիկացած չերկաթե կայծերը կանգոր կատաղու-
թյամբ առաջմները կրճակեցնում եր, չերբ գալիս եյին
իշխանի և Տաթևի ուխտի առաջնորդի մարդիկ
ու պատվեր տալիս: Խոթու հայացքով դարբինն
անեծքը շրթունքներին, թուլացած բազուկներով
շինում եր ամուր ողակներ և կապում իրար հետ...

— Այս ինչ ենք կառուցում, վարպետ. — հարցնում
եր պատանին. — Շղթաներ, վորդյակա: — Ինչո՞ւ հա-
մար... — Մեզ համար. — պատասխանում եր դար-
բինը, գեն նետում մուրճը և նստելով սառը քարի
վրա շփում խորշումած ճակատը, գլուխը կոշտա-
ցած ափերի մեջ առնում ու լուռ մտածում:

Յե՛վ գալիս եյին ռամիկները նրա մոտ
Յուրա*) բերդից, շրջանի գյուղերից, գետնափոր
հյուղերից ու գանգատվում Սմբատ իշխանի և
Գյուտ աբեղայի բռնակալութունից, ես աշխար-
հի անարդար որենքներից: Յե՛վ խորհուրդ եր
տալիս վարպետը չշինել նոցա համար պալատ-
ներ, զոյակներ և չտալ ձեթի, խաղողի, ցորենի
պտուղները...

Ու բերին մի որ իրենց խոփն ու բահերը,

*) Յուրան գտնվում է Զանգեզուրի Սվարանց գյու-
ղի մոտ:

ծեր վարպետը շինեց նրանցից սրեր կտրուկ և նետ ու աղեղ բազմազան: Քնած եր անխռով պատանին, յերբ ծեր դարբինը համբուրելով նրան անցավ ամբոխի գլուխը, վորոնք շարժվեցին դեպի վանքը, վորտեղ իջել եր իշխանը: Յեվ գնացին նոքա քրիստոնեական սեր և հաց պահանջելու...

Ճեմում եր բարձր դիտարանում Սյունյաց մեծ իշխանը և ըմպում քաղցր, սառն, գովացուցիչ ոշարակ: Կում արավ նա, բայց կոկորդը խեղդեց՝ լերբ տեսավ յեկող բազմությունը և շտապ-շտապ իջնելով մեծ աշտարակի սանդուղքներին նեղ աստիճաններից, իմաց տվեց Գյուտ աբեղային...

«Աստվածապաշտ» եր Գյուտ աբեղան և «բարի» իշխանը. նոքա խաչով, խաչվառով դիմավորեցին դայրացած ամբոխին և «բարի» իշխանին հազարավոր սպիտակ ջորիները պետական շտեմարանից հասցրին ժողովրդին հաց և ձեթ: Լալն բացվեցին նմանապես վանքի ամբարների դռները, ու հոսեց կաթ, գինի...

Լսեց այդ վանահայրը, որհնեց Սմբատ Սյունյաց մեծ իշխանին և աբեղային ու նոցա գործը փրկչական...

— Յեվ մինչդեռ արբած, լիացած ժողովուրդը պար բռնած մեծ իշխանի գովքն եր լերգում, ծեր դարբինը անեծքը շրթունքներին հուսահատված դեն նետեց իր ծանր մուրձը անդունդի խորքը...

Աբեղան ու իշխանն իրենց վարձկաններով բռնեցին և վար նետեցին Տաթևի ժայռից դարբնին և նրա համախոհներին...

Իսկ վերևից՝ չռած աչքերով, դիվային քրքիշով հրճվում եր դարերի անեծքը, պապական արատը, Տաթևի վանքը, խոժոռ, գոռ հացքով, հաղթական կեցվածքով, սրածայր խաչանիշ գմբեթները դեպի վեր ցցած...

ՋՈՐՐՈՐԴ ՂՈՂԱՆՁ

Վշտացել եր իր վարպետի կորստի առթիվ Արամիդը, բայց արի լեր նրա սիրտը և ջրտ բազուկները: Յեվ նա դարձյալ սիրով իր վարպետի նման կառուցում եր խոփ ու բահ ժողո-

վրդին, վոր շինեն տալարանքներ, պալատներ իշխանների համար և տան ձեթի, խաղողի, հատիկի պտուղներ Տաթևի ուխտին, վորովհետև այդ եր որենքը պապենական...

Լսեցին Տաթևի վանքի անսպառ հարստության մասին իսմայելացիք ու բազում զորք ժողովելով, իրար ձեն տալով, Սրադն անցնելով մասն Սյունյաց աշխարհը, վոր կործանեն նրա տաճարները ու տիրեն Տաթևի անսպառ գանձերին, և նոցա կատաղի պոպղացող աչքերում մահն եր նստած, սև մահը դաժան, անողոր...

Բայց «Իմաստուն» եր Գյուլա արեղան և զգաստ Սյունյաց Սմբատ իշխանը։ Ու նոքա յերկրի խորքերն և բերդերի ամրությունները տեղափոխեցին Տաթևի «սրբազան նշխարները», շորինների, ձիերի յերմակները և վոշխարների հոտերը։ Ծեր եր ու անողնական թշվառ հովվապետը, վորն իր կնոջը կորցնելուց հետո, նստում եր վանքի պատի տակ ու արևի զիմաց ջերմացնում իր թույլ մարմինը, և նրա ծեր հոգին մղկտաց վոշխարի սուրունների յետևից։ Նրան թողին... ու անցան...

Անողնական, անապատտան, ճողոպրած

ժողովուրդը՝ հույսը կտրած իշխանի ռազմիկներից, պալատականներից, բարձրացավ լլառը և զիմեց լեռան ճգնավորին «այսօն Հովհաննեսին»։

Վշտացավ խարանազգեստ ճգնավորը, յերբ լսեց իր հոտի, իր յերկրի դժբախտության մասին. արտասովեց կուրացած աչքերով, ապա մարգարեացավ. «Խառուցել մի հսկա զանդ, վորի զույանջը հասնի յթիներորդ յերկինք, տիրոջ ականջին և նա զթա անբախտ Սյունիքին. վասն զի բազմւմ են անհաշտ և անբարիշտ մարդկանց մեղքերը, տերը խլացել և չի լսում յերկրի ձայնը և նրանց աղոթքների մրմունջները»...

Հայտնեցին «սրբի» կամքը Սմբատ իշխանին և Գյուլա արեղային. յերկար խորհեցին յերկրի մարմնավոր և հոգևոր գործերի առաջնորդները և վոշինչ հնար չգտան... Վճռեղից լինի այդքան պղինձ ու յերկաթ, վոր ձուլեն հրապակե զանդ։ «Իմաստուն» եր Գյուլա արեղան. նա գտավ հնար ու վորոշեցին։ «Շարունակ քսութոս այս լեռնական ռամիկ ժողովրդին զինաթափել յեվ միայն նոցա պղնձն զրահներից, յերկաթն սրերից կառուցել հսկայական զանգը, յերկի փրկարարը»։

Յեվ հավաքելով ժողովրդին, հանդիսավոր պատարագից հետո, Գյուտ աբեղան ազդարարեց Տիրոջ պատվիրանը — «Ով սուր վերցնի, սրով կմեռնի»...

Թափեցին բլուրավոր մարդիկ զենք ու զրահ, իսկ վոմանք չուղենալով հրաժարվել ըմբոստ նահապետների ավանդից, անցան անտառները, լեռներ ծերպերը, չհանձնեցին և գրկեցին իրենց զենքերը կրծքներին առնական...

Կուտակված զենքերից լեռներ, բլուրներ գոյացան: Հրաման տվեց իշխանը յերկրի բոլոր պղնձագործներին, դարբիններին, վոր գան և ձուլեն փրկարար զանգը Տաթևի վանքում, Սյունյաց աշխարհում...

Միայն դարբին Արամիդը համառեց և այսպես խոսեց. ինքը չեր կարող քայլել. վանքը հեռու չե, մարմնով տկար, վոտքը կալ... Սրտմտեցին իշխանի մարդիկ, նրան քարշ տալով տարան վանքը:

Տեսավ նրան Գյուտ աբեղան իր ծերացած պղտոր աչքերով: Ծանաչեց ու վերհիշեց... Յեվ

հրաման տվեց. — Նետեցին նրան խոնավ նկուղը, ուր կային ոձ, կարիճ և զանազան թռչնավոր զեռուններ և սողուններ. կապեցին, ամրացրին նրա ձեռն ու վոտը շղթաներով:

Հին ելին ալդ շղթաները և ժանգոտ, վոր մաշել ելին բլուրավոր զոհերի մարմինները, հողին և իրենք ել մաշվել: Իսկ ջրոտ ելին, ուժեղ դարբնի բազուկները և նա ջախջախեց, փշրեց իր վարպետի կառուցած շղթաները ու նետվեց լեռների, անտառների մայրական գիրկը և քերծելով յերկրի կուրծքը, բացեց ու շինեց ժայռի ստորոտին մի աղբյուր և հագեցրեց իր ծարավը քաղցրահամ անապական ջրով չեղած յերկրի կուսական կրծքից... («Դամուրչի բուլաղ»)*):

Անուամենայնիվ զանգը կառուցվեց, վորովհետև գտնվեցին ուրիշ «բարեպաշտ դարբիններ» և պղնձագործներ...

Հսկա լեր զանգը, պատկառելի: Փայլում եր նա արևի դիմաց վորպես հրեղեն մի գունդ և «լույս տալիս» մռայլ անգունդին, խորը ձորերին...

*) «Դամուրչի բուլաղ» (դարբնի աղբյուր) գտնվում է Զանգեզուրում:

Շինեցին նրա համար հսկա մի աշտարակ խաչանիշ գմբեթով: Ահռելի ժառանգից եր կառուցված այդ աշտարակը, վոր կրում ելին իրենց մեջքերի վրա ռամիկները, հավատացյալները: Ուշատերի հոգին սավառնեց դրախտ և մարմինը ջախջախվեց, մեջքը կտարվեց անտանելի բեռան ծանրության տակ...

«Յե՛վ վանքի դիմաց, հարավ-արեւելյան բլրի լանջին ընկավ և շունչը փչեց վանքի ամենաուժեղ աջն չեզը, վոր լծված եր բեռան սայլին: Վշտացավ Գյուտ արեղան—կառուցեց նրա շիրմի վրա մատուռ ու կարգեց մի յերեց, վոր հսկի և աղօթի Ս. նահատակի գերեզմանին: Շնա մեծ չեկամուտ եր տալիս վանքին այդ մատուռը, բարեպաշտ ուխտավորներից և պատահական անցորդներից ընդունելով առատ, անսահման նվերներ և հնչյուն գրամներ՝ յերկրի բոլոր հզորների պատկերներով կտրված... («Ուխտագ յաւար»*):

Կախեցին զանգը սրբազան արարողութեամբ, և իշխանն ու Գյուտ արեղան կախվելով նրա շրջալից, հնչեցրին աջն, և դրմբում, գմբում եր արար աշխարհը զանգի ձայնից. «զանգը զը՛-ու-ո՛ւ, զանգը զը՛-ու-ո՛ւ...»

Լսեց և նրա ղողանջը լեռան խարանդագեստ ձգնավորը, նրան դուր չեկավ և թվաց տիրոջ

*) Սրբատեղի Տաթևի մոտ:

հրեշտակների յերկնային մեղեդիներ: Լսեցին նրա ղողանջը և իսմայելացիք ու արագացրին իրենց արշավը, վոր տիրեն վանքի գանձերին և վոչընչացնեն, փշուր-փշուր անեն և փոշին քամուն տան:

— Լսեց անգն Սյունիքը զանգի ղողանջը և թափվեց, հեղեղվեց վանքը. հիացմունքով դիտում, պաշտում, յերկրապագում ելին նրան, վորի ղողանջը պետք է շարժեր տիրոջ գուլթը, վորի ղողանջը փրկութեան ապավենն եր...

«Կե՛ս գիշերին վանքի վերջին զարդերը բառնալով ջորիների վրա, աննկատելի կերպով, զաղտնի դռնից դուրս չեկան բարի իշխանը, իմաստասեր Գյուտ արեղան, բոլոր զգալու միաբանները ու նոցա քարավանը բռնեց Բաղաբերդի ճամբեն, Կապանի ամրությունները, իշխանի բերդը, վոր յաթնիցս անգամ պարսպապատ եր, դռները յերկաթից, իսկ մարտկոցներում գիշեր և ցերեկ հսկում ելին հաղթական զորականք, պատկառելի նահապետների զավակներ, առյուծասիրտ պաշտպաններ և խուրձ-խուրձ կանգնած տերունական, իշխանական զորքեր...»

Վանքը մնաց թափուր, ամայի, մերկացած։
Հավատացյալները՝ անտեր, անզեն, անպաշտպան։
Ձգաց այդ իսմայելացոց բանակը ու վայրի աղա-
ղակներով, կատաղի գոռում-գոչումով, վորպես
կործանարար հեղեղ, հորդեցին։ Յեվ նոցա կա-
տաղի պսպղացող աչքերում մահն եր նստած,
դաժան մահն եր խոսում։ Հորդեցին ե կեռ թրե-
րով մորթեցին արանց և կանանց, ծերոց և
աղայոց և ամենայն չափ ու հասակի մերոց»...

Ձանգը թույլ եր, նվազ ու լուռ, և միայն յերկ-
րի վրա անշունչ, անկենդան փռված միամիտ
զոհերն ելին, վոր իրենց ակնապիշ աչքերը չուած
համը գանգին, կարծես հարցնում ելին...

... «Ձանգը զո՛ւր-զանգը զո՛ւր ... Ձանգը
հեգնա՛նք...

— Մեջքից վիրավոր սողալով, փորսոդ տա-
լով, անտառը հասավ դիակների տակից ծեր
հովվապետը և կամեցավ վերջին անգամ խմել
զով սարերի սառնորակ վտակների անապական
ջուրը... խմեց և ան քաշելով իր շունչը փչեց
իր յերբեմնի վորդեգիր Արամիդի գրկում, հիշե-
լով սարերի հովերը, փոխարենների մայունը և
հովվի սրինգը՝ ծաղկադաշտի տաղավարներում...

«Ու զարկեց դարբինը կուսնը սալին»։ Ցաք
ու ցրիվ ամբոխին միայն Արամիդը կարողացավ
կանչել, ժողովել և տվեց նոցա ձեռքը հինավուրց
զարբնոցի բլուրավոր անտեր մնացած բահերն
ու քլունգները, մուրճերն ու լծակները։ Կային
նրանց մեջ նեո ու աղեղով արագավազ, ճար-
պիկ վորսորդներ խուսառուկյան սարից, աժդա-
հաներ՝ Սուսանի կուսական անտառներից և հըս-
կաներ՝ Ձադեձորից, վորոնք իրենց ուսերին
կրում ելին արմատախիլ ծառերը... Յեվ կար-
ծես դարերը հետ-հետ գնացին։ Կրկին անգամ,
վո՛հ, այնպես հոսեց լեռնական աշխարհը՝ բաց
վո՛չ ճերմակազգեստ բրմապետի, կամ սևազգեստ
առաքյալի առաջնորդությամբ, այլ՝ հուր-հեր
Դարբինի, վորի կրծքում ծխում եր դարերի զայ-
րույթի մուխը և թունավոր մաղձը ատելության՝
ընդդեմ բռնության։

Արբել ելին արյան գոլորշիներից իսմայե-
լացոց իշխանազուհները. իսկ անանցանելի կիրճե-
րից ուզում ելին իրենց տափարակ դաշտերը,
հայրական ոջախը, սիրելիների գիրկը վերադառ-
նալ զորականք, վորոնց բերել ելին ալլահի կամ-
քով մտրակի և խարազանի հարվածների ներքո...

Բոցավառվում եր վանքը, պարում ելին մերկ գերիկանայք խարուկի շուրջը և վաժաշտ բարբարոսները գրկում, ընտրում ելին ամենից գեղեցիկներին, լիկում, ծծում նոցա դողդոջուն, վախից սպրտնած շրթունքները, համառներին սրախոխող անում, կամ նոցա ծծկեր մանուկներին խարուկը նետում...

«Նոսում եր արևելքի մոլեռանդ շեյխը ջեննաթի՝ հուրի-փերիների մասին, վոր ուղղափառ «խալամի» զավակների համար ե և ջհաննամի, վոր «գյավուրեներ»-ի տեղն ե:

Յեվ իջեցրին զանգը իսմայելացիք ու սկըսեցին ալն պղծել, անարգել և ձգել հավատացյալների առաջ արաբական նժուզների վտառերի տակ, աղբի կույտերի և մոխրի, փոշիների վրա:

Յեվ առանց «գյավուրեների» կտրված գլուխների, վոր պղնձե սկուտեղում մատուցում ելին ամեն առավոտ ու կեսորին, մեծ բարեպաշտ շեյխը չեւ կարող նամազ անել և ըմպել կամ

ճաշակել ալլահի բարիքները՝ փխլավից, շերբեթից և զրկել սևաչյա սուրմայանախշ ֆաթիմաներին...

Թշվառների ճիշը հասավ լեռների ծերպերը, մութ անտառները. և կանայք կանչեցին իրենց տղամարդկանց:— Յերկլնքը վորոտաց, յերկիրը զարգանդեց ու զինված բահերով ու քլունդներով, մուրճերով, մաճի պարագաներով, արմատախիլ յեղած ծառերով՝ հոսեց լեռներից լեռնաշխարհի ազատ զավակների բանակը: Տեսան բարբարոսների փոճրագործութունը, սրտմտեցին և անզուսպ կատաղությամբ մաղլցելով վանքի կիսավեր պարիսպներից, կրնկահան յեղած դռներից՝ գրոհ տվին նոցա հորդաններին ազատութան կանչերով՝ շարքային զորականներին իսմայելացոց բանակից:

Իգուր եր կանչում շեյխը: Ալլահի և մեծ մարգարեյի «Չիբրայեյները» ու նրանց «զիլֆուղարները» ինչ կարող ելին անել լեռների ուժի դեմ: Վասն զի համր զանգը չեւ նոցա դիմաց: Յեվ խուճապի մատնված թողեցին բազմաթիվ ուղտերն ու կերպասե վրանները, գենք ու զրահ ու զիմեցին փախուստի ճամբեն «քաջ» հրամանատարներից շատերը...

Գլխովսն ելին աղերսում գերինները։
Նայեց նրանց Սրամիդը տեսավ կոշտացած ձեռ-
քեր, արևակեզ դեմքեր ու տանջանքից կորացած
մեջքեր։ Յեվ կարգադրեց զատել ալդախիսներին
իշխանազուհներից, մուլաներից ու շելխերից։

Լսել եր «իբ հոտի» և ուխտի կործանման
մասին լեռան խարանազգեստ ճգնավորը ու
խարխափելով, շոշափելով իջավ լեռան այլից և
կամեցավ վանքի մոխիրների մեջ թաղվել, նա-
հատակ հոտի հետ միասին։

«Հասնելով այնտեղ՝ ցնծաց, փառք տվեց
աստծուն, չերբ տեսավ բարբարոսներին ջախջախ-
ված և հոտը ազատագրված. ապա շոշափելով,
խարխափելով գնաց քաշելու զանգի շղթան, վոր
նա հաղթական զոդանջե, զոդանջե... Սրտմտեց
նրա հոգին, վոր հեթանոսները զանգն իջեցրել
եյին և կոչ արեց հոտին այն նորից բարձրացնել...

Խուլ և զփվար եյին լսում ականջները և
հաղիվ եյին շոկում ծերացած աչքերը, լույսը
խավարեց այն զառամյալների, վորոնք լսեցին,
հեռևեցին ճգնավորին և գնացին զանգը նորից
կախելու...

Զանգ արին, մղկտացին և կամեցան զանգը
շարժել տեղից, վոր կախեն մեծ աշտարակից։
Նկատեց այդ դարբին Սրամիդը, վոր խնամում
եր վիրավորներին, թուլյերին։ Հուր ցայտեցին
նրա աչքերից. մոտեցավ, բռնեց ճգնավորի ձեռքը
ու արգելեց այն։ Զգաց յերկաթե բազուկի
ուժը խարանազգեստ սուրբը և հառաչանքներով
մղկտալով հիշեցրեց, «վոր փրկարար զանգի
զոդանջն ե համախմբել տիրոջ կամքով Սյունյաց
ցրված քաշերին, վորոնք խորտակեցին բարբա-
րոսների ուժը և փրկեցին յերկիրը»...

«Յեվ պատասխանեց նրան արդար ցասման
դարբինը...»

— Ստո՛ւմ ես, ինչպես միշտ։ Մեր զանգն ե
համախմբել Սյունյաց քաշերին և վոչ այս։ Զար-
մացավ լեռան ճգնավորը և հարցրեց նոր զանգի
մացավ լեռան ճգնավորը և հարցրեց նոր զանգի
մասին, չնայած կույր եյին նրա աչքերը և նա
տեսնել չեր կարող։ Նշան արավ դարբին Սրա-
տեսնել չեր կարող։ Նշան արավ դարբին Սրա-
միդը ռամիկ գեղջուկին ու նա պարզեց իբ բահը
և գարբինը զարկեց նրան իբ մուրճի թեթև
հարվածով։ Լավեց մի մեղմ, զուրեկան թրթիռ,
այնպիսի թրթիռ, վորը չեր կարող ստեղծա-
գարծել ու հնչեցնել հրեղեն տավիղի վրա վոչ
մի յերկնային «Սերովբե» կամ «Ֆերովբե»...

Հագիվ լսեց այդ թրթիւր լեռան խարանա-
զգեստ ճգնավորը՝ Տաթեվի նախկին վանահայրը
ու հեգնեց դառն ծիծաղով և այսպես խոսեց.—
Թո՛ւք ե, վողորմելի, անլսելի և նվազ դողանջը
քո զանգի...

Մարերի լանջին, ճամբի յեզրին, լեռ քա-
րափին, գարավոր կաղնիների հովանու տակ,
հինավուրց դարբնոցի քուրայի նման կրակ ու
բոց կտրվեց դարբինը և կանչեց ամենքին... Ու
բոլոր-բոլորավոր բահերի, մուրճերի, քլունգների
մերձեցման հարվածից սար ու ձոր դղրդացին,
անտառները վորոտացին և ամեն տեսակի զան-
գերից ել ավելի զիլ ձայնով կանչեցին, արձա-
գանք տվին՝ բոլորին... բոլորին... բոլորին...

Իսպառ խլացավ նոցա տհավոր բամբուռնից
ճգնավորը, սարսափած բռնեց իր ջուխտ ախանջ-
ները ու կուչ չեկավ «ահիվ և յերկուղիվ»: Հիա-
ցավ ժողովուրդը, կրկնեց իր բահերի և մուրճերի
մերձեցման հարվածները մի անդուստ վողեռու-
թյամբ: Դղրդաց, յերեքաց յերկիրը և խորտակվե-
ցին վանքի վերջին կամարները, իր սև բեկոր-
ների տակ թաղելով խլացած, կուրացած, լեռան
համբ ճգնավորին...

ՅՈՒՐԱՆՈՐԴ ԴՈՂԱՆՋԸ

Յնծացին և հրճվեցին լեռնական կանայք
ու հերարձակ մագերը քամուն տալով սրբու-

մտությամբ կանչեցին. «Ել պե՛sf չե սեզ համար
զանգը, սրկության, խաբեբայության նեանակը,
յեվ թող չլինի վո՛չ մի ասոված»... Ապա բոլ-
րավոր ձեռքեր պարզվեցին միանգամից և վիթ-
խարի զանգը՝ հառաչելով, տնքալով, շուռ չեկավ
ու գլորվեց Տաթեի ժայռից, լեռ քարափից մնայլ
անդունդը, տխուր-վնդբաձայն հաստատելով, վոր
«Չանգը գնւր եր, Չանգը-գո՛ւո՛ւր»...

Յեվ այս բոլորին վկա ելին և ախանառես
խամայեղացի քաջերը...

Լսել ելին և «իրենց» ժողովրդի փրկության
մասին Մեծ իշխանն ու Գյուլտ իմաստասեր
աբեղան և իջնելով ամուր բերդերից, անմատչելի
ամրոցներից, վերադարձան նոքա իրենց թիկնա-
պահներով, իշխանագուն պայազատներով, միա-
բաններով, հաղթական գոռ յերգեր և զիլ շեփոր-
ներ հնչեցնելով, արժվանիշ դրոշները փոփոա-
լեն դեպի վեր պարզած: Իսկ զեղացիատեսիլ,
սևաչյա, շողերես դուստրը իշխանական, նայեց
Սրամիզին ու հիացմունքով ժպտաց նրան, մեղրա-
ծոր շրթունքներով... Բայց դարբինը տեսավ իր
առաջ միայն տանջված մարդկության և վերհի-
շեց իր անցյալի տանջանքներն ու տառապանք-
ները, նվաստացուցիչ ուրերը, իշխանուհու հոր
դնդաններում, վանքի նկուղներում...

«Տեսնելով նոցա՝ ցնցվեցին լեռնականները,
եւ չպատկառեցին նրանց տեսքից և նայեցին
Դարբնի հօւր աչքերին. իսկ սա մերկացրեց իր
սուրը և նշան արավ...

Ամբոխը շարժվեց: Հասան լեռնականները՝
իջեցրին իշխաններին, պալազատներին, վանա-
կաններին, իմաստասեր Գյուտ աբեղային վոս-
կեգույն նժուզներէից, սպիտակ շորիներէից ու
հանեցին նոցա գենք ու զրահը, վոսկեթել պատ-
մուճանները ու բաժանեցին մերկերին, անկար-
ներին, անգեններին, իսկ նրանց տարան կանգնեց-
րին ժեռ քարափի անդունդի յեզրին: Բերան
և իմայելացոց իշխանազուներին, հոգևոր հալ-
րերին և կապեցին հայոց իշխանների հետ կոնակ
ընդ կոնակի...

Յելնում էյին հրեղեն գնդակներ Նման,
ապստամբների առաջնորդ զարբին Արամիդի
առնական կրծքից տանջված մարդկութեան,
հին-հին դարերի կուտակված մաղձի, տուե-
լութեան և վրեժխնդրութեան նետատարափ խու-
ֆերը ու ցցվում տառապալ հոգիների զգացմունք-
ների խորքում. և շարան-շարան լեկան անցան
նոցա առջևից իշխանների, վանականների քըս-

տմելի վոճրագործութունները, տեսանձ բռնու-
թյունները և աստվածների սին խոստումները...

Յերերաց փրփրահույզ ծովի կատաղի ալիք-
ների նման ամբոխը և հորձանք տալով, բռնեց
իշխանների և վանականների շնքից և վրեժի
իշխանների, հանուն արդարադատութեան
աղաղակներով, հանուն արդարադատութեան
թեթեւ փետուրների նման նետեցին մռայլ ան-
գունդը, վոր ախտեղ զանեն իրենց արարմունք-
ների արդար հատուցումը, խորտակված զանգը,
շախշախված փառքերի լերկ զանգը: Ապա բերե-
լով իմաստասեր Գյուտ աբեղային և մեռնի-
արժաթե սափորը նետեցին և վայեցին այն
ժայռից, ուր սև, խավար գիշերներին յերբեմն
բարձրանում եր նրա իմաստասերի, նրա վոճ-
րագործի մռայլ ուրվականը...

Յեվ այս բոլորին վկա էյին ու ականա-
սես իմայելացի փայեր: Զգացին նոցա այն
հզոր կամքը և աշխատանքային անհաղթ բազուկը,
վոր փշերեց իշխանների, ամիրանների, շեյխերի,
աստվածների, մարդարեւների, աբեղաների և
կույր խարանազգեստ վանահայրերի՝ սուրկու-
թեան շղթաները, նոցա փոշին քամուն տալով և

նրանց նետելով խոր մոռացութեան անդունդը մոռալ և անվերադարձ...

— Յեվ միթե իրենք՝ իմայելացի քաջերը քիչ ելին տանջվել իրենց ջերմ, ավագոտ, ալեծածան անապատներում, կանաչ մախմըրանման ովազխներում կամ Շախսեանի թավիշանման հովիտներում...

— Նախցին իրար իմայելացի քաջերը և տեսան, վոր իրենց աչքերում իմաստութեան հուրն ե ցուում: Ել չսպասելով, նետվեցին դարբին Արամիդի և յուրաքանչեաների գիրկը ու ցնծութեան արցունքներով, կատաղի կանչերով յեղբայրակոտն կոչ արին դեպի բոցավառվող Արեւիկը... — «Գնալ արևի յերկիրը՝ խորտակելու անջրպետը, ջախջախելու քառսուն-քառսուն գլխանի վիշապին, վորի անողոք ճանկերում թաքտում ելին իրենց հայրերն ու մայրերը դարերից ի վեր: Յեվ ինչո՞ւ ինչո՞ւ շարունակ նոցա մեջքին շառաչի ոճի մտրակը դաղող. ինչո՞ւ... Մինչև յերբ... (Ել յերբեք)...

Վառվեցին ջահերը բյուրավոր, դղրդացին անդունդները, սարերը, ձորերն ու անտառները. մուրճների և բահերի, գեներ ու զբահի շառաչյու-

նից կարծես ժայռերն իրար դարկվեցին և հոսեց մութ ալբերից մի հրեղեն լավա... Ապա լեռների և անապատների դավաճները շարունշարան կռուներին յերամակներին նման, ձգվեցին դեպի Արևի յերկիրը, վոր այնտեղ ել խորտակեն դարերի տնեծքը, պապական արատը...

Թուով Սյունյաց յերկրից լեռների ազատութեան փոքին և թափահարելով իր արծաշնման թևերը, մահասարսուռ ծղրտաց ու կանչեց. — «Խոնարկվեցեք լեռներ, սեզ սարեր և կուսական անտառներ... Աբազ, Աբազ, բացվիր, բացվիր և ճամբա տուր թող անցնեն... Դադարեցեք հողմ ու քամիներ, արհամարհում ենք ձեզ. թող վորտան ամպերը և կայծակը ճալթի հին աշխարհի գլխին և թող նա պալթի, իսկ նրա մխացող ծուխը քուլմ-քուլմ պիտի բարձրանա դեպի վեր, վորպես փողջակեղ նոր աշխարհին: Թող յերկինքը խորտակվի և տեղաասողերի անձրև... Աբազ, բացվիր և ճամբա տուր թող անցնեն...

— Յեվ յերկիրը յերերաց, որորվեց, շորորվեց ալեծածան ծովի վրա առաջ սահող նավակի պես և յերկիրը տնջաց, հառաչեց, ինքն ել կանչեց ու նոցա հաղթական յերթի յերկաթե քայլ-

վածքից զղրդալով, խոնարհվելով կամա-ակամա
ճամբա տվեց զնալու...

—
* *

Արևելքում հրդեհ եր: Կարծես հեռվում
վառվում ելին բյուրավոր բարդենինների, դարե-
վոր կաղնիների և դալար յեղենիների անառա-
նները, իսկ նրանց բոցերից կապուտակ յերկինքը
շառագունել եր կարմիր հրեղեն լավալի նձան: Կարծես պիտի թափվեն, հալվեն, շոտով-շոտով,
սին աստվածների վոսկե գահերը...

Կուսացավ: Արևը հանգա՞րտ, հալա՞րտ, վորպես
հսկա վառվող պղնձե մի անուելի գունդ կամ
հրեղեն խրճիկ, հավիտյանս-հավիտենից ճաճան-
չափալ ու բոցավառվող, բարձրանում եր Յերասխ
գետի արծաթանման կրճեից, իր շողերը սփռելով
վերածնվող, զարթնող յերկրին: Իսկ լեռներն
ընդունեցին նրա լույսը կենսատու, նրա լույսը
փրկարար...


— Վողջու՛յն քեզ, իմ Նոր Յերկիր, Խորհրդ-
դային Սյունիք. կարոտ եմ քո յերգերին պիտի
յերգեմ ըմբոստ և կարմիր որերդ Չանգեղուր...

— Վողջու՛յն քեզ իմ արևի յերկիր, պայծառ
Չաղեճոր, սքանչելի լեռնաշխարհ, վոր դարեր
առաջ վճռեցիր, վոր դարեր առաջ դեռ կանչե-
ցիր՝ զանգը զո՛ւր ե, զանգը — զո՛ւր...

«18» Փետրվարի 1927 թ.

ՅԵՐԵՎԱՆ





THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

1911

Գիրք 20 Կ. (1³/₄ Վ)



Гургеник Сюнеци
«ЗАНГ-ЗУР» ИЛИ ВОЙНА БОГОВ
Госиздат ССР Армении
Эривань, 1929 г.

55507